

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան դիմը 10 րոմբ, կես տարվանը 6 րոմբ:

Առանձին համարները 5 փողկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանությունները:

Օտարաբանությունը դիմում են ուղղակի:

Тифлис. Редакция «Маски»

Գրողությունը քաղ է առնուտան 10—2 փող

(Բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարությունները համարվում են

խորանային ըստ 2 փողի:

ԲՈՒՆԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խորագրերի, ներքին լուրերի — ԱՐՏԱՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ, ԹԻՔԵՐԻՆ, ԱՆՍՈՒՐ, Արտաքին լուրերի — ԽՍՈՒՆ, ԼՈՒՐԵՐ — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ, — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Գաղթի բեկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 27 ապրիլ

Հայ լրագիրը մե սկսած է հետզհետե յարձակողական յօդուածներ կամ թղթակցութիւններ չարք մը տպել ընդդէմ պ. Նիկողոսեանի և Պօլսից «Մշակի» ուղղեալ թղթակցութիւններին և կամ նրա «Մասիս» լրագրում երևացող յօդուածները «Մշակում» արտատպած լինելուն պատճառաւ: Թէ ինչի սա տպում է կամ արտատպում այնպիսի յօդուածներ, որոց բովանդակութիւնը կատարելապէս հակառակ է իր երբեմն քարոզած մտքերին: Ինքը որ լուսաւորութեանը և գիտութեանը ծառայումը Հայաստանի վերածնութեան միակ միջոցն ներկայացնում, այժմ էլ հիւսիսորին է իր մէջ ափսոսի գրութիւններ, որոնք ներկական և տնտեսական վարձացումը աւելի գերադաս են համարում: Մենք միտք չունենք պ. Նիկողոսեանի յօդուածները վերաբերումը որոնք ըստ մեզ չափազանցութիւններին ազատ չեն, հաստատական կամ հերքողական ոչինչ ասել:

ԴԱՍԻԹ ԲԵԿ

ՊԱՏԱՐԱՆԱՆ Ա. Ե. Պ

(1722—1728)

«Մեր հրօնը անձնապաշտպանութեան դէմ է: Նոյն հաղանդութիւն քարոզող Յիսուս Քրիստոսը, որ ասում էր՝ «Եթէ ձախ երեսիդ ապտակ տալու լինեն, աչքն էլ չուս տուր», — երբ իր անձի վրա փորձեց այդ պատուիրանը, երբ կայափա թահապաշտի ծառայից մի ապտակ կերտւ, ինքը առաջինը կտաւ, որ բողոքեց այդ անիրաւութեան դէմ: Քրիստոսեանութիւնը ազատութեան և մարդկային հասարակութեան կրօն է: Ինչ որ ընդդէմ է ազատութեան, ինչ որ ընդդէմ է հասարակութեան, ընդդէմ է և քրիստոնէութեան:

«Մեզականութեան իրաւունքը սուրբ է Աստուծոյ համար: «Մի գողանարը» նրա մեղ տուած տան պատուիրաններին մէկն է: Ինչ որ ունէ մի անհատ, ինչ որ ունէ մի ամբողջ մարդ, այնպէս է նրան պատկանի: Իսկ երբ մի ուրիշը գողանում է, յափշտակում է, — յանցանք է գործում: Այսպիսիներն ոչ միայն զրկված մարդը, այսինքն սեպականատէրը իրաւունք ունի պատժելու և յափշտակութիւնը յետ խնդու: — այլ Աստուած ինքը օգնում է զրկվածին:

«Մենք մի ազգ ենք: Ազգը — մի մեծ անհատ է, որ ունէ իր սեպականութիւնը: Մենք էլ ունենք մեր սեպականութիւնը, որ մեր հօրերից միացել էր մեզ որպէս ժառանգութիւն: Այդ հողի վրա, որպէս մեր սեպական տան մէջ, մենք ազատ վարում էինք, ցանում էինք, հնձում էինք ու հանգիստ ապրում էինք: Այստեղ մենք ունենք մեր օրէնքները և մեր կառավարութիւնը: Մեր թագաւորը, որպէս ազգային մեծ ընտանիքի հայրը, իշխում էր մեզ վրա: Բայց թշնամին եկաւ, բոլորը յափշտակեց, բոլորը ոչնչացրեց և մեզ իր սարուղի դարձրեց: — Այդ էլ գողութիւն է, մի անհայն գողութիւն: Եւ Աստուած ինքը կը

այսքան միայն կը դիտեմ որ Հայաստանի յառաջակութեան համար նրա առաջարկած միջոցները կամ խորհուրդները այն ժամանակ միայն կարող են ընդհանուր կշիռ և հաւանութիւն գտնել, երբ նրանց գրուած կը լինեն Հայաստանի հողի վրայից և ոչ թէ պ. Պօլսից: Որովհետեւ փորձերը միշտ ապացուցել են որ բարենորոգման առարկայ դարձած ժողովուրդի կեանքը, սովորութիւնները և տիրող նախապաշարմունքները և ընդհանուր արմատութիւնը դեռ ի մօտոյ չուսումնասիրած հեռուից կաղնած ծրարքը, որը քաղաքակրթութեան ամենատարրական և գործադրելի կարծուած սկզբունքների վրա էլ հիմնուած լինի, իրականութեան հետ զարմուտիկ կարող է փշղել, ինչպէս որ մի տեղ առատ հունձք արտադրող սերմը մի ուրիշ հողի վրա, զարմանալի չէ, որ անարդիւն կը մնայ և գործարդուած աշխատութիւնը չի պատկերի: Բայց ինչ որ վերաբերում է այն հարցում «Մշակի» բունած ընթացքին մենք անպատշաճ և զայրուլի պատճառ տուող ոչինչ չենք տեսնում: և հետեւաբար այս առթիւ կատարուող յարձակումները համարում ենք «Մշակի» իսկական ոգին և միջոց ցարդ ընտրած ուղիւթները չի ճանաչելից և կամ չի ճանաչել ճանաչելից: յառաջացած անտեղի վարմունք և կամ չար կրքի և յուզեալ երկակայութեան արդիւնք:

Երբ յարուցված է հայ լրագրութեան մէջ ազգային, հասարակական կամ մասնաւոր հարց մը, որոյ ազատ վիճաբանութեան նուիրված յօդուածները «Մշակը» չէ ընդունած իր մէջ: Որպէս մի կողմի «այդն» նշնայէս և հակառակ կողմի

«ոչը» համարձակապէս և անկեղծաբար ներկայացրել է իր ընթերցողների առաջ, միանգամայն պարտաւոր: Ընկերով բացի որոշեալ կողմերից՝ մէկի առարկայի մասին ամենայն անհատների դատողութիւններին և մտածանք ևս արտայայտել լինել: Որպէս սերով տպել է իր տաղանդաւոր աշխատակից Մկեղազէի հայ ուսանողութեան տխուր նկարագիրը, նոյնպիսի սիրով տպել է ուսանողութեան իրան արգարացող պատասխանը, առանց վրդովելու թէ վերջինը ուղղած էր իր յարգի աշխատակցին դէմ: Ընթերցողը «Մշակի» մի և նոյն համարում կարգաց բարեգործական ընկերութեան ծրարի առթիւ բռնի Նաւասարդեանի առ խմբագիր և խմբագիր առ յիշեալ պարոն ուղղեալ նամակներ և դատեց որ կողմն էր արդար: Նմանապէս բացայայտ է որ «Մշակը» որպէս տպեց Նիկողոսեանի գրութիւնները նոյնպէս էլ պատշաճ կը լինի տպել կամ արտատպել նրա յայտնածների հակառակը հաստատող որ և է զրկած, բաւական է որ դա հիմնված լինի ճշմարիտ փաստերի վրա և հարցի լուսարանելուն նպատակ, բայց ոչ բնաւ կրքի կամ ատեւութեան ծրարունգ: Որովհետեւ «Մշակը» փորձով ցոյց է տուած որ նա միշտ իր թղթակցների կամ աշխատակիցների բոլոր կարծիքները անխորիչ է բաժանած, երբ տեսել է նրանց մէջ ողջամտութիւն և կամ իր պաշտած գաղափարներին հակառակ մտքեր բացարձակապէս անջատուել է նրանցից: «Մշակի» էջերը խորի ամեն վիճաբանութեան համար բաց են եղած մինչև երբ, մինչև որ խորի ամեն կողմերը պարզուելից յետոյ անաշխարհ յօդուածով մը յայտնել է իր

դատողութիւնը և կարծիքը: Ի նպատակ այս կամ այն կողմակցութեան: Այնուհետեւ բնականաբար դադարել է երկողմանի օրդան լինելից և ազատ համարձակ նուիրված է իր ջատագով կանգնած գաղափարների ծաւալմանը: Կարծեմք լրագրի մը դէպք ինչ գոյնի կամ ինչ գաղափարների տեղ լինելը կորոշվի իր առաջնորդող յօդուածներին, իսկ մնացած մասերը թէ թղթակցութիւններ և թէ յօդուածներ, լինեն նրանք ամենազգալի կերպով իրար հակադասող և կամ անարդիւն իրարմէ մտքերին ներհակ, այսու լրագրի պակասութիւնն ոչինչ արած չը լինի, այլ աւելի կը հաստատէ իր անկողմնակալ ոգին: Իսկ Նիկողոսեանի և Պօլսից ազգային գործողների վերաբերմամբ դարձեցրած հարցումն էլ «Մշակի» թերթին ուղով հետեղ ընթերցող մը չէ կարող տեսնել թէ սա յայտնած լինի որ և է զրկված կամ ժխտական կարծիք, ուստի իր վերջին խօսքը տակաւին չէ ասած: Գեռ. սպասում է որ պարագաները աւելի պարզվեն, որպէս զի առաջնորդող յօդուածով մը տալու վերջին խորհուրդը և յայտնելու կարծիքները Հայաստանի իրական կեանքի մէջ գործադրելի լինեն և ոչ թէ լուր խօսքեր:

Եթէ պատահել է որ երբեմն «Մշակը» ազգային որ և է նշանաւոր գործողի նկատմամբ չէ վարանած իր կանխապէս յայտնած կարծիքը ետ կոչելու, այսինքն լաւ հուշակէտ այն անձին ուրիշ մերթ վատ էր կոչած, կամ վատ հուշակէտ, որին երբեմն լաւ էր ասած, այս էլ դարձեալ պէտք է վերաբերել լրագրի անկեղծութեան: Բանի որ մարդը մի գործով կը գնահատուի և «Մշակն» էլ միշտ աչքի առաւ է ունեցել գոր-

ծին մեզ, երբ մենք կը պատժենք գողին և յետ կը խնդրենք նրա յափշտակութիւնը: «Աստուած իր սուրբ գրքի մէջ մեզ տուել է հազարաւոր օրինակներ այդ մասին, ես կը յիշեմ մի քանիսը միայն:

«Ահա ինչ է ասում Եհովան Մովսէսի բերանով խորալէի ժողովրդին: «Երբ որ քո Տէր Աստուածը քեզ կը տանէ այն երկիրը (Բանաստեցոյ երկիրը), ուր որ պիտի մտնու ժառանգելու համար, Նա քո առջևիցը շատ ազգեր պիտի հալածէ, այսինքն քրտագիններին, գերպեծացիներին, ամօրհացիներին, քանաւոյցիներին, փերեզացիներին, խնացիներին ու յիւրասացիներին: Այս ևս թեր ազգերին, որոնք քեզից մեծ ու դժուար են, երբ որ քո Տէր Աստուածը դրանց քո ձեռքը կը տայ, պէտք է դրանց կոտորես ու բոլորովին ոչնչացնես:»

«Արքայապետ, Իսաակի և Յակոբի հայրերին տիրում էին օտարազգիները: Աստուած կամենում էր, որ Իսրայէլը կրկին տէր դառնար իր հայրենական ժառանգութեանը և հրամայում էր նրանց կոտորել, եթէ չը հաղանդվէին:

«Գարձեալ ասում է Եհովան Մովսէսի բերանով խորալէի ժողովրդին: «Երբ որ մէկ քաղաքի մօտենալու լինես, նրա հետ պատերազմելու համար, նախ նրան խաղաղութեան հրաւիրէ: Եւ թէ որ քեզ խաղաղութեան պատասխան կը տայ ու դռները քո առջև կը բաց անէ, այն ժամանակ քաղաքի մէջ գտնված բոլոր ժողովուրդը պէտք է քեզ հարկատու լինի և քեզ ծառայութիւն անէ: Բայց թէ որ քեզ հետ խաղաղութիւն անել չը կամենայ, և պատերազմ անէ, այն ժամանակ պէտք է քաղաքը պաշարել: Եւ երբ որ քո Տէր Աստուածը քո ձեռքը կը մատնէ այդ քաղաքը, նրա բոլոր արուներին պէտք է սրի բերելից անցկացնես: Իսկ կնիկներին, տղաներին, անասուններին և ինչ որ կայ այն քաղաքի մէջ, — նրա բոլոր աւարը քեզ համար պէտք է վեր առնես, և քո Տէր Աստուածը քեզ մատնած քո թշնամիների աւարը պիտի ուտես: Ահա այսպէս պիտի անես քեզից հեռու գտնվող բոլոր քաղաքներին հետ:

Եւ քո Տէր Աստուած քեզ ծառայութեան տուած այս ազգերի (օտարների) քաղաքների մէջ մի որ և իցէ չունէ ունեցողին պէտք է բնաւ ողջ չը թողնես:»

«Եւ Աստուած կատարեց իր խոստումները, օգնելով Իսրայէլի ժողովրդին, որ նա տիրէ իր հայրենական երկրին և ոչնչացնէ այնտեղ բնակվող բոլոր օտարազգիներին, որ նոյն երկրի տէրն էին դարձել: Իր հրեշտակներով Նա մինչև անգամ միջամտութիւն էր գործում, միանում էր խորալէի ժողովրդին հետ: Երբ Յիսուս ամօրհացոց հինգ թագաւորների հետ պատերազմ ունէր, Աստուած նրան օգնութեան հասաւ, և Գաբառնի ճակատամարտի ժամանակ, երկրեք շաբթ կարկուտ թափելով ամօրհացիների վրա, բոլորին կոտորեց: Իսկ Յիսուս նրանց հինգ թագաւորներին բռնել տալով, հրամայեց կախ տալ հինգ ծառեր:»

«Երբ ասորոց Սենեքերիմ թագաւորը Իսրայէլի եղեկիայ թագաւորի հետ կռիւ ունէր, Աստուած իր հրեշտակի ձեռքով մի գիշերով մէջ կոտորեց Սենեքերիմի զօրքերից հարիւր ութսուն և հինգ հազար հողի:

«Հաղաբաւոր այսպիսի օրինակներ կարելի է բերել սուրբ գրքից, որոնք ցոյց են տալիս, թէ անհատի սուրբ պարտաւորութիւնն է: Եւ հայրենիքի ազատութեան, հայրենիքի պաշտպանութեան համար կատարված պատերազմը սուրբ պատերազմ է: Այլ և չեմ խօսում Գաղթի, Սոգոմոնի պատերազմների մասին, որոնք մի և նոյն ժամանակ իսրայէլի թէ մեզ և մեր փոքրիկ դէպք տուելիս կենանք, որ ցոյց է տալիս, թէ որ աստիճան միջուկանութեան էր հասած ազգասիրութիւնը այդ մեծ մարդարէի և օրէնսդրի մէջ: Մի անգամ Մովսէսը տեսնում է մի եգիպտացու, որ նախատում էր մի խորալէից, այն բողոքում սպանում է նրան և նրա դիակը թաղում է Նիկոսի աւազանի մէջ: Այստեղից շատ պարզ է ազգային նախաձեռնողութիւնը:

*) Երկրորդ օրինակ Ե. զ. համ. 10—16

*) Յիսուս Ե. զ. համ. 11

«Բայց մեր կոյր, տգէտ, անկիրթ եկեղեցականները, որոնք ամեն օր Աստուծոյ տաճարի մէջ կարդում են ձեզ Մովսէսի, Յիսուսի, Գաղթի և Խորալէի մարգարէների գործերը, — երբեք չը բացատրեցին, երբեք չը քարոզեցին ձեզ, թէ Աստուծոյ այդ ընտրանքները որքան միլիոնաւոր մարդիկ են կոտորել, որքան ազգեր են ոչնչացրել, մինչև կարողացել են իրանց ազգը՝ խորալէն հաստատել իր հայրենական երկրում:

«Եւ մենք տեսնում ենք Հայաստանի բարօրութիւնը այն դարերում միայն, երբ նրա հոգեւոր հովիւները Մովսէսի, Գաղթի, Յիսուսի հօգին ունէին: Երբ նրանք խաչի հետ կրում էին և սուր: Երբ նրանք քրիստոնէական առաքելութեան հետ քարոզում էին և՛ անձնապաշտպանութեան և՛ հայրենիքի պաշտպանութեան առաքելութիւնը: Երբ նրանք հայրապետական աթոռի պարտաւորութիւնները միացրել էին թագաւորի դաժն պարտաւորութիւնների հետ: Երբ նրանք եկեղեցու շահերը հաշտեցրել էին պետութեան շահերի հետ: Հայաստանը երբանիկ էր դրանց օրերում: Բայց ցաւելով պիտի խոստովանվեմ, որ այսպիսիների թիւը այնքան սակաւ է, որ նրանք ներկայացնում են փղբրիկ, կանաչազարդ օստիմներ մեր հոգեւորականութեան տխուր, լայնատարած անապատի մէջ: Եւ կարող եմ մի քանիսի անունները միայն յիշել: Ներսէս մեծը, մի ոտքը Բիւզանդիայ, միւսը Տիւրքիոյ դրած, անզաղար բանակցութիւնների մէջ էր, երբեմն պարսից, երբեմն յունաց արքունիքի հետ: Երբ դեւանագիտական բանակցութիւնները ցանկացած նպատակին չէին հասցնում, նա սկսում էր կռուել: Երբաւ դաշտի ճակատամարտի ժամանակ, երբ հայերը պարսիկների հետ պատերազմում էին, նա Նպաստ լեռան գագաթի վրա, ձեռքերը դէպի երկինք բարձրացրած, հայոց քաջերի՝ բազուկներին դժբախտութիւն էր խնդրում: Նրա որդին՝ Սահակ Պարթևը տուեց Հայաստանին զին, զորութիւն, զիտութիւն: Որպէս զս բազաբաբական հայաժանքների, նա շատ անգամ աքսորվեցաւ, բանտարկվեցաւ Պարսկաստանում: Յովսէփ եպիսկոպոսը, Ղևոնդ երէցը այն հոգեւորական-հերոսներն էին, որ միացան Վարդանի հետ և կատարեցին

պատճառով տարիվում են եղել յետ քաշվել:

„Polit. Corresp.“ լրագրին սուլթան Աբդուլ-Ազիզին 1876 թվին սպանելու մասին Կ. Պոլսից հաղորդում են հետևեալը: Մի քանի ժամանակ է, ինչ խօսում են բազմաթիւ անձանց կալանաւորելու մասին, որովհետեւ ապացոյցներ են ստացված, որոնցից երևում է, թէ սուլթան Աբդուլ-Ազիզ ինքնասպանութիւն չէ գործել, այլ նրան սպանել են: Այդ լուրերը ճիշդ են: Այժմ թագաւորող սուլթանը դեռ գահ բարձրանալու ժամանակից հաւատացած էր, որ Աբդուլ-Ազիզ ուժով սպանված էր, և մի մասնաժողով էր նշանակել սպանողներին և նրանց համարձեցներին գտնելու համար: Այդ մասնաժողովի գլխաւոր անդամն է պետական խորհրդի օրէնսդրական բաժնի փոխնախագահ Մահմուդ-բէյ, որ փաշայութիւն է ստացել և որի մասին ասում են, թէ ապագայում կարող է մեծ դեր խաղալ: Այդ մասնաժողովն էլ բաժանում էր սուլթանի կարծիքը Աբդուլ-Ազիզի սպանման մասին և համոզված էր, որ սպանութեան մէջ բարոյապէս մեղաւոր էր Հուսէյն-Ալի-փաշա և այդ պատճառով զբաղված էր սպանողներին և նրանց համարձեցներին գտնելու հոգեւորութիւն ժողովի աշխատանքները աջակցեցան և մեղաւորները այժմ բանտարկված են: Յանցաւորները գտնվեցան իրանց հայրենիքի մէջ, որտեղ նրանք գնացել էին սպանութեան համար վարձատրութիւն ստանալուց յետոյ և Կ. Պոլսի բերդաւանդ յետոյ նրանք բոլորը պատմեցին: Վրիսաւոր մարդասպանները երեք են, որոնցից երկուքը Նուրի-փաշայի պալատական ծառաներն են, իսկ երրորդը Փահլեվան մականունով, որի պալատականները բռնուցեցով կոխ են և որ վարձված էր այն դէպքի համար, եթէ սուլթանը ընդդիմանար: Մարդասպանները խոստովանվեցին, որ սուլթանին նրանք խեղդեցին բարձով, բայց որպէս զի դիակը սեւանալով առիթ չը տար սպանութիւնը կատարելու, բայց արին նրա երակները և նրա մօտ մկրատ դրին, որ մտածէին, թէ սուլթանը ինքնասպանութիւն է գործել: Հարեմից երկու կանայք մասնակցում էին դաւադրութեանը: Նրանք մեղադրվում են նրանում, որ մարդասպաններին տարան Աբդուլ-Ազիզի ննջարանը և սպանութեան ժամանակ հսկում էին հարեմի մօտ: Աբդուլ-Ազիզի նախկին կամերգեր Փահարի-բէյ նոյնպէս մեղադրված է, որովհետեւ սպանութեան օրը պահպանեց զինուորներին անսովոր հրաման տուեց, որ նրանք սուլթանի մօտ ոչոքի չը թողնեն: Նուրի-փաշա, որի երկու ծառաները մասնակցել են սպանութեանը, կասկածանքի տակ է, բայց մինչև այժմ կալանաւորված չէ, այլ նրանից հարցեր են քննութեան ժամանակ: Աբդուլ-Ազիզի թագաւորութեան ժամանակ Նուրի-փաշա պալատական գոֆմարշալ էր: Նա շատ վատ անուն ունի, մասնաւոր այն ժամանակից, երբ քննութեամբ յայտնվեցաւ, որ նա յափշտակել էր նրան յանձնված պալատական բրիգանտները 70,000 թիւքաց լիրա արժողութեամբ: Աբդուլ-Ազիզի մայրը ուշաթափեցաւ, երբ իմացաւ քննութեան հետևանքները: Նա հաւատացում է, որ Միտհաթ-փաշան էլ մասնակցել է սպանութեանը: Յայտնի է, որ ցանկանում են ու լիշներին էլ մեղադրել:

ԱՆԳԻՒՍ

Լրագիրներին մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները: Պարլամենտական երբ-

ման խնդիրը, որ նորերումս նորից բարձրացաւ անգլիական համայնքների ժողովի մէջ պատգամաւոր Բրեդլի Թոմսի, դրեց Վալդեստին վերաքննել պարլամենտական երդման օրէնքը: Վալդեստին յայտնեց համայնքների ժողովին, որ նա սպրիլի 30-ին այդպիսի մի առաջարկութիւն կանի:

Վալդեստին այդ վարձուքի պատճառը յայտնի է: Որովհետեւ դատարանը յայտնեց, որ Բրեդլի իրաւունք չունի ձայն տալ համայնքների ժողովի մէջ առանց նախապէս երդվելու, որի փոխարէն նա միայն խոստում տուեց, այդ պատգամաւորի ընտրութիւնը անվաւեր համարվեցաւ և նա ստիպված էր նորից ներկայանալ իր ընտրողներին, որոնք կրկին նրան ընտրեցին իրանց պատգամաւոր:

Երբ Բրեդլի ներկայացաւ համայնքների ժողովին, ընդդիմադրական կուսակցութիւնը դարձեալ չընդունեց նրա երդումը և մի անկարգութիւն ծագեցաւ: Այս անգամ էլ Վալդեստին չը միջամտեց գործին, պատասխանատւութիւնը ժողովի վրա թողնելով: Այնու ամենայնիւ գործը սղոյթն էր կարող վերջանալ: Բրեդլիի հետ պատահած անցքերը ապացուցին, որ պարլամենտական երդման օրէնքը հնացած և անբնական է: Բրեդլիի անաստուած կարծիքները բաժանող մարդիկ բաւական շատ են Անգլիայի մէջ: Այդ ա զ ա տ մ ա ծ ո զ ն ե ի ի յ շ ա տ ե ի կարող են համայնքների ժողովի անգամ ընտրվել և անիրաւութիւն կը լինէր անգլիական սահմանադրութեան հիմնական սկզբունքների վերաբերութեամբ թոյլ տալ, որ ամեն տեսակ քաղաքական իրաւունքներ ունեցող անգլիացիները զրկված լինեն իւրաքանչիւր անգլիացու համար ամենաթանկ իրաւունքից, համայնքների ժողովի անգամ լինելու իրաւունքից: Այդպիսի անբնական և անիրաւացի օրէնքը պէտք է փոփոխվի և այդ բանը կաջողվէր Վալդեստին, եթէ հանգամանքները ուրիշ լինէին:

Տարաբաղդաբար Բրեդլիի անձնաւորութիւնը չափազանց հակակրելի է ազատամիտ կուսակցութեան անդամներից շատերի համար: Վալդեստին միայն այն ժամանակ կարող է աջակցել նոր օրէնքի ընդունելը, երբ կը յայտնի, որ նրա քուէարկութենից կախված է կառավարութեան հրաժարականը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Русский Курьер» լրագրին հեռագրում են, որ արքայական միութիւնը, զիմելով մեծ պետութիւններին մի շրջաբերականով, խնդրում է հաստատել մի ինքնավար արքայական վերաբեթ:

— Լոնդոնում բացվել է Ալվադոսկու նկարների ճանդէսը:

— Տուրինի բէյը զիմեց Խառլային, օգնութիւն ինդրելով Ֆրանսիայի դէմ: Ֆրանսիացիները հասել են Բիզերային: Երկուց են կրում որ տեղական ցեղերը կապտամարկին:

— Մոնթեպիլիօյի հեռագրում են Լոնդոն, որ անգլիական «Գոտֆրէյ» չղեկնաւոր ձայնվեցաւ ապրիլի 26-ին: Մօտ 140 հոգի ոչնչացան, միայն 10 մարդ կարողացան փրկվիլ:

— Լոնդոնից (Միջազգային հեռագրական) ընկերութիւնը հաղորդում է որ երդուեալները վերջին կայացրին Եւրոպայի դատաստանին «Freiheit» լրագրի խմբագիր Մօստին: Նա մեղադրվում է իր յօդուածներով թագաւորապանութեան գործը գովելու մէջ: Երդուեալները այն կարծիքը յայտնեցին որ Անգլիայի օրէնքներին և բարձր ու վարքերին հակառակ է համբերել որ այդ երկրում հրատարակվի մի լրագիր, որ զերգուում է հասարակութիւնը դէպի թագաւորապանութիւնը:

— Իրանդիկում շարունակվում են կալուածատէրերի և պոլիցիականների սպանութիւններ,

չինութիւնների ձայնիւններ և հրդեհներ: Իրանդական հողային միութիւնը աւելի էլ վրդովւած է երևում անգլիական կառավարութեան դէմ, այն օրից, երբ վերցվեցաւ «Habeas Corpus» անուանված օրէնքը, որից յետոյ կալանաւորութիւնները և բանտարկութիւնները բազմացան Իրանդիկում:

— Պահպանողականները վճռել են ընդդիմադրել անգլիական պարլամենտի մէջ մտցրած առաջարկութեանը պատգամաւորներին երդումը փոխարինել հասարակ խոստումով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Заря» լրագրի թղթակիցը գրում է Կիէվից, որ այդ քաղաքում իր վրա ընդհանուր ուշադրութիւն է դարձնում մի երեսայ, որ կատարեալ ճիշդ կարող է համարվել: Տասն երկու տարեկան Լէյա Մօցկին, ինչպէս երևում է հրէայ, այնպիսի մաթեմատիկոս է, որ մաթեմատիկայի վարժապետը նրա բացատրութիւններից միացել էր ապշած: Ազգերայից, դեմոկրատիայից, ազգայնականութիւնից նրան տուած ամենապարտաւոր լուծելի խնդիրներին մասնակց ախպէս պարզ, հասարակ բացատրութիւններ էր տալիս, որ բոլոր ներկայ գտնվողները մնում էին հիացած և մի և նոյն ժամանակ այդ պատասխաններից երևում էր թէ ինչ աստիճան դարգացած է երեսայի մաթեմատիկական ընդունակութիւնը: Չաւազան հարցմունքներ անելուց վերջը, ներկայ գտնվող վարժապետները յայտնեցին, որ երեսայի մաթեմատիկական ընդունակութիւնը, ջանքով ինքնուրուշ շատերը կարող էին նախանձել, այնքան պարզ, ճիշտ, հասկանալի էին լինում նրանք: Զարմանալի էր մի և նոյն ժամանակ որ չը նայելով թէ ամեն կողմից լսվում էին զովասանքներ, որ բոլորը զարմանում ու հիանում էին երեսայի կարգից դուրս ցայտ տուած ընդունակութեամբ, նա դարձեալ այնպէս էին իրան շատ հանգիստ, անկողով, կայծու թէ այդ բոլորը նրան չէր վերաբերվում: Երեսային հայրը յայտնեց որ իր որդու համար երեք վարժապետ չէ ունեցել, նա նրան միայն զբոս էր տալիս, իսկ երեսայ ինքն մենակ էր պարապում: Լէյա Մօցկին այնպէս սիրահարված է մաթեմատիկայի վրա, որ հայրը ստիպված է լինում շատ անգամ արգելք դնել նրա պարապմունքներին, վախճանալով որ այդ հասկանում մաթեմատիկայի մէջ այդքան հետաքրքրված վատ հետեւներին կուենայ որդու ուղեղի վրա: Հրէայի դէմը շատ համակրելի է և վերին աստիճանի խելացի արտայայտութիւն ունի: Տեսնելով նա իր տարիքից աւելի փոքր է երևում:

Մօտ օրերս Նէապոլում, Սարնօ քաղաքի մէջ կաթօլիկների եկեղեցում մի մեծ սկանդալ պատահեց: Սուրբ Ֆրանցիսկո եկեղեցու հայրերը չարաշարժի շարքով համար պատուիրել էին Գրիստոսի մի այնպիսի արձան, որի զուէրը և ձեռքերը կարողանալին շարժվել: Հասկանալի թան է որ այդ օրը տաճարում անգործի բազմութիւն էր հաւաքվել այդ հրաշքը տեսնելու և ստատիկ արձան էին գցում եկեղեցուց: Արեւմտեան եկեղեցի, մի շատ ուժեղ մարդ, բարձրացաւ սեղանը և աշխատում էր հանգստացնել հասարակութեանը, բայց ի դուր, ոչ ոք չէր ուզում լսել նրան. տեսնելով որ խօսքով ոչինչ չէ կարելի անել, նա վայր իջաւ սեղանից, վերադառնաւ արձանը ու նրանով սկսեց խփել աղմուկ հանդիսի գլխներին: Երբ այդ գէշքը փչովեց, նա սկսեց գործ դնել իր ուժեղ բռնուցքները և մինչև անգամ արեղաներից մէկին, որը նրան մօտեցնելով աշխատում էր այդ կռիւն վերջ տալ, մի բռնուցքի հարուած հասցրեց երեսային: Ներկայ գտնվողների ընդհանուր կռիւ և սարսափելի խռովանքները մասնաւոր մօտ 60 մարդ վիրաւորեցան և նրանցից մի քանիսները բաւական վրանգաւոր կերպով:

Ֆրանսիայում երեկոյան մի նոր տեսակի փողոցային կառքեր. ամբողջ կառքը կայքած է զանազան յայտարարութիւններով: Այդ մի անցիտեղական ընկերութեան գործն է, որը մեծ յոյսեր ունի ապագայում: Այդ տեսակ կառքերով մանգալ շատ է ժամն է, որովհետեւ ձիաների և կառապանի բոլոր ծախսերը ծածկվում են յայտարարութեան եկամուտով: Բոլոր վաճառականները իրանց յայտարարութիւնները այժմ սկսում են կայքել այդ կառքերի վրա: Միայն պատահում են այնպիսի անձինք, որոնք ամօթ են համարում մանգալ մի կառքով, որի դուրսը ծածկված է բեկրամինով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՏԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՐ
Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 28 ապրիլի «Правит. Вѣстн.» հաղորդում է որ Կիւիւում անկարգութիւններին հրէաների դէմ վերջ դրվեցաւ զօրքերով: Անկարգութիւն անողներից 500 մարդ կալանաւորվեցան: Ապրիլի 27-ին անկարգութիւնները նորից սկսվեցան և կըրկին նրանց վերջ դրվեցաւ զօրքի միջա-

մուտեամբ: Սպանվեցաւ մի կին և վիրաւորվեցան մի քանի մարդիկ:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 28 ապրիլի: Թագաւոր Կայսրը հրամայեց առհասարակ զենեկաշատեր բոլոր օթեր-Ֆիլեդէններին և բարձր աստիճանաւորներին թոյլ տալ միուրբ ունենալ Գվարդիայի և զինադրեան գօրաբաժնի սօլդատներին թոյլ տուած է միւրուք չափերը: Գառչիւօի պարտումը բոլոր ծառայողները ունեն իրանց մօտ իրանց լուսանկար պատկերները, որոնց երկրորդ օրինակը պահվում է պալատական կանտորայում և իւրաքանչիւրը պալատը մոտեցու ժամանակ ներկայացնում է կենդանադիրը: Գնդապետ Անտօնով պաշտօն ունի ամեն օր պահպանել Թագաւորին: Բոլոր արտասահմանեան լրագիրների հաղորդածները Թագաւորի պահպանութեան մասին սուտ են: Ս. Պետերբուրգում սպասվում է Չէրնոգորիայի դեսպանութիւնը:

Կ. ՊՈԼԻՍ, 27 ապրիլի: Ֆրանսիական դեսպան Տիսսօ ներկայանալով երէկ Բ. Ղըրանը յայտնեց, որ Ֆրանսիական կառավարութիւնը տեղեկութիւն ստացաւ թիւքաց զրահաւոր նաւերի ուղարկելու մասին Միջերկրական ծովը և որ Ֆրանսիան բոլորքում է եթէ այդ նաւերը ուղեւորվեցին դէպի Տունիս: Եթէ նաւերը կը մօտենան Տունիսի ափերին, Ֆրանսիացիները կը հանդիպեն նրանց թնդաւորների հրաձգութեամբ: Ֆրանսիայի կողմից արած այդ սպառնալիքների առիթով Թիւքիւնի դիւտաւորութիւն ունի զիմել միւս պետութիւններին մի շրջաբերականով:

ՍՕՅԵԱ, 27 ապրիլի: Իշխան Ալէքսանդր մէկ շրջաբերական հրատարակեց, որի մէջ ասված է. «Միաձայն ընտրութեամբ յանձնեցին ինձ Բօլշարայի վիճակը: Ոչ առանց տատանման ընդունեցի ինձ վրա խնդիրը տանել Բօլշարային առաջարկման ծանապարհի վրա. ես աշխատում էի առմենարդար կերպով, թոյլ էի տալիս ինձ ամեն տեսակ փորձեր իշխանութեան գարգացման իրաւական կազմակերպութեան վերաբերութեամբ: Բայց ցաւում եմ, որ այս բոլոր փորձերը ապարդիւն անցան: Ներկայումս Բօլշարայի հաւատարմութիւնը կորցրած է դրսից և կազմակերպութիւնը խախտած ներքից: Գործերի այդպիսի դրութիւնը խախտեց ժողովրդի մէջ հաւատ դէպի օրէնքների արդարութիւնը: Իշխանը յետոյ յայտնում է, որ նա գէներալ Էրնօտին յանձնեց ժամանակաւոր կարիքեալ կազմել մինչև Մեծ Ազգային ժողովի վճիւր: Յետոյ ասված է. «Եթէ այդ ժողովը կը հաստատի կառավարութեան անհրաժեշտ պայմանները, որոնց ես կը ցոյց տամ և որոնց բացակայութիւնը գործերի ներկայ դրութեան հիմնաւոր պակասութիւնն է կազմում, այն ժամանակ ես թագը կը պահեմ իմ գլխին, որովհետեւ իմ նպատակն է երկրի առաջադիմութիւնը և բաղդը: Ես սրբազան պարտաւորութիւն եմ համարում հանդիսաւոր կերպով յայտնել, որ ներկայ գործերի դրութիւնը այս նպատակի իրագործումը անկարելի է դարձնում: Սահմանադրութեան հիման վրա ես վճռեցի Մեծ ժողովը հրաւիրել: Ազգային կամքի այս բարձր օրգանը կը դարձնի իրան թաղը Բօլշարայի վիճակի հետ միասին: Եթէ գործերի ներկայ դրութիւնը չի փոխվի, այն ժամանակ ես վճռել եմ ցաւելով դաճը թողնել, բայց այն համոզմունքով, որ ես մինչև վերջը կատարեցի իմ պարտքը: Նոր կարիքեալ անդամներն են. գէներալ Էրնօտ խորհրդի նախագահ, զինուորական և ներքին գործերի մինիստր-Յէլիսլովիչ, Ֆինանսների մինիստր Մոնիշչովիչ: Մնացած պօրտֆէլները առաջվայ մինիստրներին մնացին:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 27 ապրիլի: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 97 ռ. 50 Կ., երկրորդ 94 ռ. 37 Կ., երրորդ 95 ռ. 50 Կ., չորրորդ 94 ռ. 75 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսաւ կը արժէ 226 ռ. 75 Կ., երկրորդ 220 ռ. 75 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսաւ արժէ 93 ռ. 87 Կ., երկրորդ 93 ռ. 87 Կ., երրորդ 93 ռ. 87 Կ., չորրորդ 93 ռ. 87 Կ.: Բոլորը 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,78 պէնս, առաջ 100 ռ. փարիզի վրա արժէ 261 Ֆրանկ 75 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է, վերջը աւելի հանդարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՐՈՒ ԱՐՏՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչև այժմ չեղած ԱԿՆՆԻ ԻՎ ԲԺՆԿ
ՀԱՌԻՏԻ, որ կատարելագործված է բժշկ. ՄԱՎՐԻ-
ԿԻՒ ԴԻՅԶԻՑ: Առողջացնում է ամեն տեսակ թու-
ԼՈՒԹԻՒՆ, եթէ նա բնական չէ: ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՐՈՒՆ ԸՆ-
տանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՀԻՇ, այդ իսկից,
մանրամասն խմբագրութեան մասին: Այդ
իսկից կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆ-
ՆԵՐԻՑ և ԱԿՔԱՆՈՐ ՎԵՆՅԵԼՑԻ, Կազանից առ-
կողոց № 3: 49—52

ՎԱՐՇԱՎԱ: Իր յատկութիւններով մարմնի մասերի և
մասնաւոր ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փտումն
ոչնչացնող յայտնի ներթը,
ԳԱՆՄԱՆԵՆ
անունով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրոշմատների
մօտ: Գլխաւոր դէպք ներթի հնարող Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍ-
ԿԻՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլեկտրային փողոց № 35:
Գալմանի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.
պէտք է զգուշանալ խարդախութեանց և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը
ունենայ գործածութեան մեկնութիւնը և փարիզի աշխարհահռչակ մեղաները:
Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ 2—20 (1)

Չոր նոյնիվ մաքսերի աւելանալուն ապրանքները առաջիկայ դներով կը ծախվին.
ԿՈՆԳՈՒԹԵՑ 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կոպ., շատ լաւ **ՄՈՆԻՏԵՐ** 1 ռ. 20 կ. և
1 ռ. 40 կ., հիւսնային **ԿԱՅՍԱՌԻ** 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒԻ**
ԹԵՑ 2 ռ. առանց թղթի: Անգլիական լէվոյիկներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20
ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱՐԻՒ ԹԱՄԲԵ-**
ՐԸ, ջնանքի **ԿՈՂՊԵՔՆԵՐԸ,** Տուրքիոյ **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկտրակա կակաո-
շօխոյի ծախելու համար, որոնք վարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան:
ՀՈՏԱԻՏ ԹԵՑԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ռ. 65
կ. և ամենալաւը 2 ռ. 30 կ.: Սառնակներն ոգտաւէտ է մեծ քանակութեամբ
ապրանքներ առնել: Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ռ., կօֆեկաներ
հազի գէմ 60 կ. ֆունտը: 64—100

Վերականգնող **ՄԱԿ-ՄԱՍ-**
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադար-
ձնող: Գինը 2 ռ. շիշը, **ՓՈՍՏԱ-**
ՅՈՎ ուղարկված 2 ռ. 49 կոպ.:
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:
ՄԻ և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ
ԻՎ, մազերը ամրացնելու հա-
մար, 1 ռ. ամենը փրձին գլխա-
յաւի գէմ, ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱ-
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:
60—100

ՎԱՃԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ կը
ծախվին. վարտիքներ 4 ռ., ամբողջ հա-
զուստ 14 ռ. և աւելի, արիւն և պարուսի-
նա 75 կ. արշինը: Նոր ձեւի հրացաններ
45 ռ. 60 ռ. և 100 ռ., լէվոյիկներ 4—
40 ռ., գլխարկներ 1 ռ., թամբեր 30 ռ. և
աւելի, կօնեակ առաջին տեսակի 2 ռ. շիշը,
հին պօրտ-վէյն և խերես 1 ռ. 40 կ., շամ-
պայն գինի 3 ռ., կօնֆեկաներ 35 կ. ֆունտ-
առ, շօխոյա-ֆրայի 1 ռ. 20 կ. անգլ. ֆունտը
և թէյ առանց թղթի 1 ռ. 60 կ. ֆունտ-
առ, ամենալաւը Մօսկվայց 2 ռ. 20 կ.
թղթով: **ՄԻԵԻՆՈՅՆ ՏԵՂԸ ՄԵՐ**
ՔԱՆԱԿՈՒԹԵԱՍԲ մահապանքի,
մատուցարաններ, կողպէքներ, դանակներ,
գզալներ, գրիչներ, թուղթ, կէտնկա, ձիա-
սանտր, փրձին, ամաններ, բաժակներ, մու-
րաբաններ և այլն 30% աւելի էժան, քան
թէ ուրիշ խանութներում:
14—15

Ռուսիոյ Ամերիկայի տուեստական մագա-
զիւնում, ծախվում է, Աւստրիայի բիպի-
գիւրանդի (յօսաներ) հարիւր հաւան 55 բուր-
նով: Դիօրցովայա փողոց գալէրէյ Արծրու-
նի:
4—10

144 Արծրունու գալէրէյ 144
ամենաէժան պահեստ
մարէլի և հայկիկների:

Մամուլի տակից դուրս եկած և վաճառվում են Կենտրոնական Գրախառնու-
ցում:
1. Հայր և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական դասախօսութիւն ըն-
թերցուած Թիֆլիսի ժողովարանում Արքայ Յովհաննէսեանի. Թիֆլիս, 1881 թ. գ.
30 կոպ.
2. Նոյն տեղը վաճառվում են:
Միւլթիւն Հայութեան, Բանախօսութիւն Մարգարայ Ծ. Վարդապետի Օր-
մանեան, արասանեայ 'ի յարանիւն կրթասիրաց ընկերութեան Յիւսիլատար 'ի 17-ին
նոյնմբերի 1879 թ., Կ. Պոլիս գ. 45 կ.
3. Տեղեկագրութիւնը ի փոքր և ի մեծ Հայ Հ. Ներսէսի Սարգսեան Միւլ-
թարեան վարդապետի, Վենետիկ գ. 4 ռ.
4. Ստորագրութիւն հին Հայաստանեայց Հ. Ղուկ. վարդ. Ինձիճեան ի Միւլ-
թարեան Միւրա, ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց ի Վենե-
տիկ գ. 5 ռ.
5. Պատմութիւն Աւիստակայ վարդապետի Լատիֆերցիոյ, Վենետիկ գ. 1 ռ. 50 կ.
6. Միւլթիւն Գրիգորի Առաջնոյն Սրբոյ Քահանայապետի կանոն Հովուական,
Վենետիկ գ. 1 ռ. 50 կ.
7. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք և աղօթք,
Վենետիկ գ. 2 ռ.
8. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ Վենետիկ
գ. 2 ռ.
9. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղեկարութիւն յամի 1876
Արշակայ Մ. Արթուրեան Գօքչան գ. 1 ռ. 20 կ.
10. Սոյ. Կեանքի Բերթուած ի Մահն Արիւն, Թարգմանեալ Տեառն Հ.
Մանուկի Վ. Զախճախեան ի Միւլթարեան միաբանութիւնէ, Վենետիկ գ. 1 ռ.
75 կ.
11. Առաջ Միւլթարայ Գօշի, Վենետիկ գ. 1 ռ.:
Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատիկի տօնիկին նուիրու զանա-
զան հասակի մանկանց ընթերցանութեան համար փառապաշտ գրքեր, Ֆրիքեան խա-
ղեր, նկատողական ուսման պատկերներ և այլն:
Օտարաբաղադրացիք ձանապարհի ծախք են վճարում 10% առանց փողի պա-
տուէրները չեն կատարվում:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԿԱՅԻՆ ՈՒՄ			
Հա.մ.մատեցէք Թէյի ֆունտը	1 ռ. 5 կ.	Մօսկվայց բերրի Թէյի հետ ֆ.	1 ռ. 30 կ.
—	1 ռ. 10 կ.	—	ֆ. 1 ռ. 40 կ.
—	1 ռ. 20 կ.	—	ֆ. 1 ռ. 60 կ.
—	1 ռ. 40 կ.	—	ֆ. 1 ռ. 80 կ.
—	1 ռ. 60 կ.	—	ֆ. 2 ռ. —
—	1 ռ. 80 կ.	—	ֆ. 2 ռ. 50 կ.
Ամենալաւը	2 ռ. —	—	ֆ. 3 ռ. —
			75—100

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳ-
ԼԻԱԿԱՆ ՄԱԿԱՅԻՆԸ ծախվում
է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ
և այլ ապրանքներ: Ուղղահե ալմա-
զալիներ ստանում է թէյ ուղղակի պլան-
տատօրներից, առնում է բոլոր ապրանքները
ուղղակի գործարաններից և բաւականա-
նում է փոքր շահով: Այդտեղ կայ սովո-
րաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տե-
սակի, կակաո և շօխոյա-ֆրայ, մուրաբա
և կօնֆեկտներ 25% աւելի էժան, քան թէյ
ամեն տեղ, անկողններ, հրացաններ, բե-
վոյվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ա,
մաններ, դանակներ, գզալներ, թէյաման-
ներ, բաժակներ, թմբեր, գուլպաներ
կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-
մանկանց, կարկնիք, թուղթ, մատու-
ներ, տետրաներ, գրիչներ ամեն ձեւով
համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-
ժան քան թէյ ուրիշ տեղ: Արծրունու
գալէրէյում: 100—90

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳ-
ԼԻԱԿԱՆ ՄԱԿԱՅԻՆԸ ծախվում
է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ
և այլ ապրանքներ: Ուղղահե ալմա-
զալիներ ստանում է թէյ ուղղակի պլան-
տատօրներից, առնում է բոլոր ապրանքները
ուղղակի գործարաններից և բաւականա-
նում է փոքր շահով: Այդտեղ կայ սովո-
րաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տե-
սակի, կակաո և շօխոյա-ֆրայ, մուրաբա
և կօնֆեկտներ 25% աւելի էժան, քան թէյ
ամեն տեղ, անկողններ, հրացաններ, բե-
վոյվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ա,
մաններ, դանակներ, գզալներ, թէյաման-
ներ, բաժակներ, թմբեր, գուլպաներ
կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-
մանկանց, կարկնիք, թուղթ, մատու-
ներ, տետրաներ, գրիչներ ամեն ձեւով
համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-
ժան քան թէյ ուրիշ տեղ: Արծրունու
գալէրէյում: 100—90

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ
«ԻՄ ԷԼ ԻՄ ՍԱՂ»
անունով գիրքը, որ պարունակում է իր
մէջ 90 դեռ լոյս չը տեսած բանաստեղ-
ծութիւններ:
Օտարաբաղադրացիք կանխիկ մէկ բուր
ուղարկելով, դիմում են ուղղակի հեղինա-
կին հետեւեալ հասցեով:
«Чрезъ Просковейское Почтовое отделение
въ городѣ Святаго-Креста (Свявранолье. губ.).
Учителю Семену Сафарянцу.»

Արդէն վաճառվում է
ԻՆՉ ԲԱՆ Է
ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից
և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժո-
ղովրդական և հասարակաց մաշկի խրատ
բժշկ. Պ. Ա. Խլինսկոյ:
Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրանց
Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զի-
ջումն կը լինի Միւր հասցէն: Въ Эривань
А. Гуламирянц